№ 34 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23 **1899** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23 № 34

ԿՈՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարուան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Անդա Յովհաննիսեան և Աւետիս Բալայեան Վաճառականները յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ այսօր 25-ին, Վանքի մայր-եկեղեցում կը կատարվի առաջնի թաղադրին հոր և երկրորդի աներոջ՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԽՈՒՆՈՒՆՑԵԱՆԻ

քառասնօրեայ հոգեհանգիստը: Պատարագի սկիզբը առաւօտեան 11 ժամին: 3—1

Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԻՄԷՕՆԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

մահվան տարեդարձի օրը, երեքշաբթի, այսօր 23-ին, Վանքի մայր-եկեղեցում, պատարագից յետոյ, կատարվելու է հոգեհանգիստ, որի համար մայրը՝ Սօֆիա Բալայեան, կինը՝ Անդա Մովսէսեան, քեռակինը՝ Նատալիա Ներսէսեան, հարսը՝ Անդա Գրիգորեան և եղբայրները՝ Գրիգոր, Արշակ և Յակովբ Սիմէօնեան Ստեփանեանցները յայտնում են ազգականներին և յարգողներին: Սկիզբն է ժամը 11-ին առաւօտեան: (չ. ե.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԻՆՉՈ՞Վ ՊԷՏՔ Է ՁԱՆԱԶԱՆՎԵՆ — *Մեր կեանքի նորագոյն երևոյթներից մէկն է բազմաթիւ ինտելիգենտ ոյժերի խմբվելը կապիտալի շուրջը: Այն անձանց, որոնք երէկ զբաղված էին ուսուցչական պաշտօնով այս և այն գաւառական քաղաքում և գիւղում, կամ որ և է պաշտօն ունէին տեղական վարչական հիմնարկութիւնների մէջ, այսօր մենք տեսնում ենք թաթախված բագուի նաւթի մէջ, կամ պաշտօն ստանձնած զանազան գրասենեակներում և արհեստանոցներում: Մենք այժմ մտադիր չենք քննութեան նիւթ շինել այն հարցը, թէ հասարակութիւնը ինչ ստիպման ճնշումից ինտելիգենտ ոյժերի այդ միակողմանի հոսանքից: Մենք այսօր վերցնում ենք երևոյթը իբրև կեանքի իրողութիւն, որ ունի իր գոյութեան պատճառը և այդ շրջանակի մէջ ցանկանում ենք որոշել ինտելիգենտ ոյժերին վերապահված դերը:*

Մեր մէջ մինչև այժմ կապիտալը և կրթված դասակարգը միմեանց հետ սերտ յարաբերութիւն չէին ունենում: Եւ դեռ, ընդհակառակը, կրթված մարդիկ խորշում էին կապիտալի աշխարհից, գերադասելով դպրոցի կամ վարչական և հասարակական որ և է հիմնարկութեան մէջ համեստ վարձատրութիւնը կապիտալի ընծայած նիւթական առաւելութիւններին: Կապիտալի ներկայացուցիչները, իրանց քիչ կրթութեամբ և տեխնիկական անբաւարար պատրաստութեամբ առաջ էին մղում իրանց գործը մեծ դժուարութեամբ, խարխափելով անորոշութիւնների մէջ, շատ անգամ թոյլ տալով տգեղ վարմունքներ: Շնորհիւ բնական աչքաբացութեան, շնորհիւ պատահական օրինակների, երբեմն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ֆ. ՇՊԻԼՀԱԳԷՆ

Փետրվարի 12-ին Գերմանիան տօնեց վիպագրող Ֆրիդրիխ Շպիլհագէնի ծննդեան եօթանասնամեակը:

Շպիլհագէնն աչխարհահռչակ հանճար չէ, բայց ունի մի անուն, որ ամեն տեղ արտասանվում է խորին յարգանքով և երախտագիտութեամբ: Նրա վէպերի վրա կրթվել է մի ամբողջ սերունդ, նրա ստեղծագործական տաղանդը եղել է ժարդկութեան բարերար դաստիարակիչներից մէկը: Շպիլհագէն հասարակական իդէալների բանաստեղծ է—և ահա այստեղ պէտք է որոնել այն դիւթական ոյժը, որ սիրելի և համակրելի դարձրեց նրան նաև իր հայրենիքից դուրս և մանաւանդ Ռուսաստանում: Ո՛վ կարող է ժամբերել իր երիտասարդութիւնը և միանգամայն ժառանգել այն թարմացնող, յուզիչ տպաւորութիւնը, որ գործում էր այդ ժամանակ Շպիլհագէն իր բազմաթիւ ստուար վէպերով: Ով չէ յիշում այդ «Խորհրդաւոր բնաւորութիւնները», «Մի ծիծեռնակով գարուն չի լինի», «Սալի և կռանի մէջ» վերնագիրները կրող հատորները: Եւ ով կարող է ասել թէ նրանք չեն քրքրել իր միտքը, չեն հարկադրել մտածել, հոգով մանուկից լինել այն հարցերին, որոնք յուզվում են այդտեղ:

Տաղանդաւոր վիպագրողը ժամանակին երևան եկաւ: Նրա հերոսները մարդկայնութեան, ազատութեան, մի խօսքով նոր ժամանակի զինուորներ են: Այդ հերոսների ոգևորութիւնը, վշտերը, ծիծաղն ու ողբը, որքան էլ զերմանական իրականութեան ծնունդ լինեն, բայց ունեն համաշխարհային կնիք, հասկանալի, ընտանի են ամեն տեղ, ուր կայ վերանորոգվելու տենչանք, ուր նոր կեանքը իր պահանջներով այնքան նահատակներ ու դահիճներ է հանդիսացնում:

Լինել առաջաւոր հոսանքների դրօշակակիրը մի այնպիսի ժամանակ, երբ հասարակութիւնը զգում է վերանորոգչական գաղափարների բուռն, անդիմադրելի ճնշումը—դա մի երախտիք է, որ իր պատուաւոր տեղը կունենայ առաջադիմութեան պատմութեան մէջ: Շպիլհագէնին չէին հատանում տափակ մտքի տէրերը կամ նրանք, որոնք գեղարուեստի մէջ լոկ գեղարուեստ են որոնում, այսինքն լոկ վայելչութիւն, առանց այրող հարցերի, առանց այն ուժգին ցնցումների, որ առաջ է բերում կեանքը և պահանջում է ուշադրութիւն, լուծում: Այդպիսի ժամանակներում հասարակութիւնը կարօտ է գործիչների, ուզում է նկարել իր երևակայութեան մէջ թէ իրական հանգամանքներից լինչ տեսակ գոհեր և հերոսներ կարող են ծնվել: Սոխակների երգերը բաւարարութիւն չեն տալիս, և երդուեալ գեղարուեստագէտները, որոնք քարացած են յայտնի կանոնագրութիւնների վրա, պարտաւորութիւն չեն համարում իշնել օլիմպիական բարձրութիւնից, ականջ դնել մսից և արիւնից կազմված իրականութեան ձայներին: Շպիլհագէնն այդպիսիներից չէր: Նա չէր կարող խուլ ու կոյր մնալ և անա նրա գրչի տակից դուրս են գալիս զանազան հասկացողութիւնների ներկայացուցիչ տիպեր. դրանց մէջ մարմնացած է ոգևորող, կուռող, պահանջող հասարակութիւնը: Այդ տիպերի մէջ կայ հակապատկերների առատութիւն. և իսկական հերոսները նրանք են, որոնք կուռք են դարձրել հասարակական իդէալները, որոնք ծառայում են ժողովրդին մի անձնուրացութեամբ, որ ներելի է դարձնում նրանց չատ սխալները, արատներն անգամ: Ինքն իրան մոռանալ, ուրանալ և ամբողջապէս հասարակաց բարիքին նուիրվել—այս էր երիտասարդ Գերմանիայի գաղափարը, նրա դաւանութիւնը: Այդ դաւանութեան նախահայրերից մէկը, Բեօրնէ, ասում էր. «Թող ազատութիւնը բաժանված լինի մեզանից արեան ծովերով—մենք դարձեալ կը հանենք նրան»: Ցաւառ, տակուն աչխատութիւն ժողովուրդը հին հասկացողութիւններից ազատելու, տգիտութեան, խաւարի ճանկերից գլխելու համար—այսպէս են այն ժօտիվները, որոնք չարժում էին Շպիլհագէնի տաղանդը: Բայց լինչո՞ւ, խօսելով մի կենդանի տեղինակի մասին, մենք գործ ենք ածում բառեր, որոնք անցեալն են յիշատակում: Աւաղ, պատճառն այն է, որ Շպիլհագէնն այժմ ժառանգութեան մէջ է, այլ ևս չէ կարդացվում այնպէս, ինչպէս 20—25 տարի առաջ: Ժամանակները փոխվեցին, նիւթապաշտական իդէալները դուրս մղեցին այն երազներն ու տենչանքները, որոնք Շպիլհագէնի հերոսներին էին տանջում և այժմ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Մլչտ և միշտ կրօնափոխութիւնները... Կ. Պօլսի մէջ իրարանցում է. հայերէն անլեզու և անբարբառ լրագիրները նկատելի կենդանութիւն են ստացել, առաջնորդող առաջնորդողի հաւից են բաց թողնում՝ վանում հոգիներ որսող զօրիվիկեան վարդապետների դէմ. պատրիարքը հեռագիրներ է ուղարկում, չրջաբերականներ է հրատարակում, կրօնական ժողովը որոնում է մի այնպիսի հոգևորական, որ Բօսֆորի «բոյրերը» թողնելու ու Վան գնալու առաքինութիւնն ունենայ. մինչև իսկ Բ. Դուռը չհոգված է, տեսնելով որ քրդերի զոհերը Վատիկանի գիրկն են ընկնում. նա էլ «թեթեւութիւններ» է խոստանում գաւառացիներին և յորդորում է կրօնափոխ չը լինել. Կ. Պոլսում երևան են եկել բարերարներ, որոնք փող են տալիս հայ կղերին՝ հոգիների որսը փողի միջոցով դադարեցնելու համար: Մի խօսքով—Կ. Պոլիսը եռանդ, հոգածութիւն է դարձել: Քանի որ Վասպուրականը սուված էր, օգնութիւն էր աղաղակում, Կ. Պոլսի ջօջերը խուլ էին և համր: Բայց երբ «սրբազան ինկվիզիցիայի» տեղինակները սկսեցին եռանդուն որսորդութիւն, այն ժամանակ—միայն այն ժամանակ—ջօջերը գործի կպան եթէ ոչ ի սէր առաքող, սուվատանչ մարդկութեան, գոնէ ի սէր լուսաւորչականութեան: Այդ էլ, ի հարկէ, գովելի է: Բայց ցաւն այն է, որ այդ գործունէութիւնը յիշեցնում է առակի այն մարդներին, որոնք ուզում էին զանգակ կախել կատուի վզից: Ըստ երևոյթին, դրութիւնը լաւ է հասկացված. կատուն ոճիրներ է գործում, անպատկառ ծուատում է մինչային հասարակութիւնը, և միանգամայն հանճարեղ է այն միջոցը, որ գտել են կեղեքվողները. պէտք է միայն մի զանգակ կախել անողոք գազանի վզից, որպէս զի ամեն մի խեղճ մուկ լսէ թէ գալիս է իր թշնամին և թաքնվի: Շատ լաւ է մտածված ամեն ինչ. բայց զանգակը ինչպէս կախել: Ահա օրհասական հարցը:

Որպէս զի գաղափար մը ունենաք թէ խեղճութիւնը մինչև ուր կը տանի մարդը,—ասում է «Արեւելք» լրագիրը,—փութանք ըսել թէ լատին կրօնքը տարածող այդ Տոմինիկեանները, բացի այն միանուագ գումարէն՝ զոր կուտան իւրաքանչիւր կրօնափոխի՝ ամսական հինգ ղրուշի նպաստ մը միայն կը յատկացնեն անոնց ամէն մէկուն կարևորութեան ու պէտ-

նրանց քարոզութիւնը, նրանց վիշտն ու ուրախութիւնը—«մոռացված խօսքեր» են դարձել: Այժմ անհատականութիւնը, եսամոլութիւնը պաշտվում է այնպիսի չրջաններում, ուր մի ժամանակ «ընդհանուր քարիք», «հասարակական գաղափար» բառերն էին հնչում: Եւ մեր ժամանակներում նրանք, որոնք դեռ կրկնում են այդ մտքերը և դեռ հաւատ ունեն թէ վերջը դրանք պիտի լինեն մարդկութեան իդէալը, արդէն ծերացած են համարվում, ինչպէս ծերացած է գերմանացի վիպագրողը, «մոռացված խօսքերի» հեղինակը:

Մեր ժամանակներում, այո, քիչ չեն այդպիսի «ծերեր» և նրանք մի կողմ են քաշվել, որովհետև ասպարէզը պատկանում է գաղափարից, մարդկային սրտից և զգացմունքից զուրկ, կարիերիստ «երիտասարդութեան»: Գեկադենտներին, մտաւոր խաւտակութեան դար է, երբ վայրենի մարդակերութիւնը, լրբութիւնը առաքինութիւններ են և չահամոլ, թեթևամիտ տենդենցիաները յաղթանակի քրքիջներ են արձակում, ապականելով այն ամենը, ինչ մի ժամանակ պատկառանք էր ներշնչում և սրբութեան պէս էր պաշտվում: «Ծերերը» և «երիտասարդները» կանգնած են միմեանց հանդէպ. առաջինները լուռ են, արհամարհում, վերջինները ոտնակատարներ են, իրերի անպատման տէր: Սակայն, ինչ կասած, ծերութիւնն է թարմացնող—այսպէս է այժմ աչխարհի կարգը: Եւ դրա ապացոյցը այն ծերի յօբելեանն է, որ տօնվեց Գերմանիայում:

Լէօ

ՆՈՎՅԵՍՏԻ

IV

Ալեքսեյեվն վիր էին էդ տղան, որ ասում էր, թե ինքն էլ գրում է, ու ինչ-որ բան էլ գրել էր, ու ինչ-որ բան էլ ասում էր, ու ինչ-որ բան էլ ուզում

ընտիրներին և յաճախապատումներին»։ Խորհուրդը գտել է, «որ առաջարկած թեմային այդ չարաղրութիւնը լիուլի համապատասխանում է. նա՝ իր նիւթի ճոխութեամբ, որը մեծ մասամբ առաջին անգամ է հրատարակւում, լուսաբանութեան նորութեամբ և նուրբ նկատողութեամբ ներկայացնում է մի խոշոր երևոյթ մանուֆակտական դիտութեան մէջ և արժանի է, որ տպագրվի համալսարանի ծախքով ու վարձատրվի ոսկեայ մեդալով»։

Նոյն ֆակուլտետի ուսանող Իվան Զավախով նոյն թեմայի համար առաջարկել է մի չարադրութիւն այս դէպքում. «Հին ժամանակներին և հին մարդկանց ներելի էր ստեղծել լեգենդներ, բայց մեզ վրա պարտաւորութիւն կայ զանազանել լեգենդները պատմական ճշմարտութիւնից». այս չարադրութիւնը ճանաչվել է արժանի վարձատրվելու ոսկեայ մեդալով, որովհետև «ուսումնասիրողը բոլորովին պատրաստ է գիտնական աշխատութիւնների համար»։

Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, փետրվարի 22-ին, վերջապէս ստացվեց Ռուսաստանի պօստը, որ ամբողջ 7 օր մնացել էր Կօբի կայարանում ճանապարհի փակ լինելու պատճառով։ Այդ կայարանում հաւաքված մօտ 40 հոգի ուղևորները ամբողջ 8 օր սպասելով և տեսնելով, որ բուքը չէ դադարում և ճանապարհները չեն մաքրվում սարերից ընկած ձիւնների կոյտերից, որոշում են, փետրվարի 20-ին, ոտով անցնել մինչև Գուդաուր կայարանը. ներքանը կարողանում են մեծ դժուարութեամբ անցնել այդ տարածութիւնը Կօբի կայարանից մինչև «Խաչ» կոչված բարձրութիւնը, որտեղից արդէն սահնակներով հասնում են Գուդաուր։ Մեզ հաղորդում են, որ ուղևորները Կօբի կայարանում ենթարկվել են չատ զրկանքների. ճանապարհների փչացուցիչ պատճառներից մէկը նոր հոկող լինժինէրների և վերակացուների անտեղութիւն ու թուլութիւն է եղել։ Այնտեղ, ուր հարկաւոր էին հարիւրաւոր բանուորներ, հազիւ կարելի էր տեսնել տասն բանուոր։ Հաղորդակցութիւնը կազդով դեռ չէ հաստատված։

—

Պուշկինի ծննդեան հարիւրամեակի տօնախմբութիւնը, ինչպէս երևում է, ոչ միայն համառուսական, այլ միջազգային բնաւորութիւն պէտք է կրէ։ Լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգի դերմանական դեսպանը յայտնել է, թէ դերմանական բանաստեղծները և գրողները, թւով աւելի քան 125 հոգի, մտադիր են մայիսի 26-ին մի չքեղ պատկ դնել Պուշկինի դերեզմանի վրա։ Պարիզի ուսանողները որոշել են ուղարկել մայիսի 26-ին ռուսաց ուսանողներին արհեստական ծաղիկների փունջեր մաղաւէնով և այս մակագրութեամբ՝ «յիշատակ բարեկամներից, ի պատիւ մեծ բանաստեղծի»։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը արդէն մշակել է նօրմալ կանոնադրութիւն ապաստարանների, անկեալանոցների, հանրակայարանների և դրանց նման բարեգործական հիմնարկութիւնների համար։

—

Ֆինլանդիայի լրագիրները հաղորդում են, որ Ֆինլանդական սենատում այս օրերս կայացաւ առանձին խորհրդակցութիւն ռուսաց լեզուն երկրի պաշտօնական հաստատութիւնների մէջ պարտադիր անելու հարցը քննելու համար։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, ինչպէս հաղորդում են «Рус. Вѣдомости» լրագրին, չուտով մշակելու է մի ծրագիր Կովկասի և Անդրկովկասի օտար ցեղերի դպրոցների համար։

—

Պետերբուրգից «Кавказъ» լրագրին հեռագրում են, որ գեներալ Պոտտո նշանակված է կովկասեան զինուորական շրջանի չտաբի զինուորապատմաբանական բաժնի գլխաւոր։

—

Տիկին Պազմաբօվայի օպերետային խմբում աւելացաւ մի նոր ոյժ։ Պետերբուրգից հրաւիրվեց տենօր Սվետլանօվ, որ առաջին անգամ դուրս եկաւ կիրակի, փետրվարի 21-ին Միլլեկերի «Գասպարօնո» օպերետում։ Սվետլանօվ կատարում էր էրմինիի դերը։ Նա ունի ախորժալի ձայն, երգում է ճաշակով։ Օպերետային խմբի վերջին ներկայացումները գրաւել էին մեծ հասարակութիւն։ «Վիննեցիական գիշեր» օպերետը, որ ունի գեղեցիկ երաժշտութիւն և դրաւիչ տեսարաններ, հաւանութիւն գրաւեց հանդիսականների կողմից։ Երգչուհի Բայսօվա իր բենեֆիսին տուեց «Բօկկաչիո» և արժանացաւ հանդիսականների բուռն պգացմունքների արտայայտութեան. նրան ընդունեցին երկարատև ծափահարութիւններով և տուին բազմաթիւ թանգագին ընծաներ։

—

Առաջիկայ հինգշաբթի օր, փետրվարի 25-ին, Բագուում տեղի կունենայ սովորական երեկոյթ-պարահանդէսը, որ տրվում է գրադարան-ընթերցարանի օգտին։ Երեկոյթի չքեղութեան համար արված են մեծ պատրաստութիւններ։ Բժշկական ժամում կը մասնակցեն ջութակահար Վասիլիեվ, օպերետային երգչուհի Բայսօվա և օպերային երգիչ Դելլա-Մօրէ։

—

Փետրվարի 13-ին Բագուում կայացաւ տ. Սիրանույշի բենեֆիսը։ Թատրօնը, ինչպէս հաղորդում է «Каспій» լրագիրը, կատարելապէս լի էր. մուտքը հասաւ 2300 րուբլու։ Տիկին Սիրանույշ ստացաւ բազմաթիւ ընծաներ, 5 հազար րուբլի արժողութեամբ։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղ օրվայ հարցը գաղթականներին իրանց տեղերը վերադարձնելն է. սրանից մի քանի օր առաջ, պ. ոստիկանապետի հրամանով, այստեղ հաւաքվեցին Քեօսի, Խառի, Ղարաքաղի և այլ շրջակայ գիւղերի գաղթականները, որոնց անունն ու ազգանունները, որտեղացի լինելը արձանագրելուց յետոյ՝ արձակեցին։ Խօսք կայ, որ գաղթականների այդ ցուցակը չուտով կուղարկվի Կարս, պ. նահանգապետին»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Թանգութիւնը անասելի է մեզ մօտ. ոչինչ չէ ճարվում։ Թրժւարութեամբ ոչխարի մսի երես ես տեսնում, որը հազար ու մի «մունաթով» ծախում են 18 կօպ. ֆունտը։ Իւղը—40 կօպէկ, հաւի հատը 35—40 կօպէկ, ցորենը 1 ր. 40 կօպ.։ Երէկ մեծ ձիւն եկաւ այստեղ և հատ չերտով ծածկեց գետինը սպիտակ սաւանով։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Բագուեցի տիկին Տ. Յակովլեան, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու, յանձն առաւ Դիլիջանում նոր եկեղեցի չինել, որի համար նա տուել է 25,000 րուբլի։ Աշխատանքն արդէն սկսված է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ռաշտ, փետրվարի 15-ին

Դեռ մի հարցը չը վերջացած՝ ծագեց մի ուրիշը։ Մենք մեր նախկին նամակներից մէկում յայտնել էինք, թէ տեղիս հոգևորականութիւնը ինչպէս լարված է նահանգապետի դէմ և թէ յարմար առիթի է սպասում նրա դէմ բողոքելու, նրան պաշտօնանկ անելու։ Ճանապարհային հարկի համար տեղի ունեցած անկարգութիւնները առաջանակ մոռացութեան տուին այդ խնդիրը. այժմ, երբ այդ խնդիրը փակված է համարվում, հանդէս եկաւ մէս նոր խնդիրը։ Արդէն վաղուց մի քանի պատճառներով նահանգապետի դէմ լարված էր հոգևորականութիւնը։ Անցեալ 8-ին, առաւօտեան, նահանգապետի դրան մօտ ականջից ծառին մեխած էր մի մօլլա և ահա ինչ պատճառով։ Մի փարրաշ կամենում էր թէյարանից ձերբակալել մի ինչ որ մոլի պարսկի և դատարան տանել, բայց պարսիկն ապատանել էր, «բաստ» էր տուել այդ մօլլային տանը։ Փարրաշը գնում է մօլլայի մօտ, բայց սա հրամայել էր ծեծել նրան։ Նահանգապետը հրամայում է բռնել հոգևորականին և բերել իր մօտ։ Փարրաշները գնում բերում են բռնի կերպով այդ մօլլային, նահանգապետի հրամանով նրան բաւական ծեծում են փայտով և յետոյ ականջից գամում են հրապարակում, իբրև ամբոխի։

Այդ հոգևորականի եղբայրը, որ աղդեցիկ հոգևորական է, ահագին աղմուկ բարձրացնելով՝ վազում է փողոցները և արդարութիւն ու օգնութիւն գոռում. նոյն միջոցին մի ուրիշ սէյիդ, բոթիկ և գլխաբաց, մազերը փետելով, փողոցներում ամբոխին սկսում է գրգռել։ Այդ միջոցին պատժված հոգևորականի եղբայրը մտնում է մզկիթները, ուր գտնում են ահագին բազմութեամբ ուսանող մօլլաներ, նրանց գրգռում է, և ահա մի ամբողջ խումբ սպիտակ չալմաներով մօլլաների՝ թւով հազարի չափ, փայտերով զինուորված, ոտաբաց, մեծ մուշտէյիդի առաջնորդութեամբ, «Եա, Ալի, եա Մահամադ» գոռալով՝ յարձակվում են նահանգապետի տան վրա, քարերով կոտրատում դռներն ու լուսամուտները։ Արձակում են գամված մօլլային և յարձակվում բանտի վրա, սակայն չէ աջողվում բանտի դուռը կոտրել։ Այդ վայրենի աղաղակները չատ երկար չեն չարունակվում։ Նահանգապետը փակված էր ներսի տան մէջ, ուր ամբոխը չէր կարողանում հասնել։

Այդ միջոցին երևում են 10 հոգի «մալիչի» սահմանապահ զօրքերը, զինուորված հրացաններով, որոնք թէև ոչ մի գնդակ չեն արձակում ամբոխի վրա, բայց նրանց ներկայութիւնը բոլորին թուլացնում է. խռովարարները խմբովին գնում են մեծ հոգևորականի տունը՝ խորհուրդ անելու։

Ցիշենք մի փոքրիկ դէպք. երբ հոգևորականների հոսանքը դիմում էր դէպի նահանգապետի տունը և բռնի կերպով ստիպում էր խանութները փակել, մի հայ չոպպով խանութը փակում է և փախչում քարվանսարան. նրա ետևից մի մօլլա ձայն է տալիս. «դու ձուր ես փախչում, մենք ձեզ հետ ոչ մի գործ չունենք»։

Կէս օր էր արդէն, հոգևորականները խորհրդից յետոյ անպէտ բաղմութեամբ թափվեցին հեռագրատուն և հեռագիրներ էր, որ տեղում էին Թէհրան։ Հետևեալ օրը միայն Թէհրանից ստացվեց նահանգապետի անունով այս հեռագիրը՝ «Կարող ես չարունակել քո պաշտօնը, կարգադրութիւն արված է, չուտով օգնութիւն կը հասնի»։ Իսկ հոգևորականների հեռագրին այս պատասխանը եկաւ. «Հոգևորականութեան գործը չէ քաղաքական գործերի մէջ խառնվել. յարձակում գործեցիք պետութեան տան վրա, չատ լաւ արեցիք. եթէ ցանկանում էք՝ չարունակեցէք»։ Հետևեալ օրը քաղաքն արդէն պատերազմական դրութեան մէջ էր. քաղաքի դանազան անկիւններում երբեմն-երբեմն երևում էին «մալիչի» զինուորները։ Իսկ երեկոյեան արդէն 150-ի չատ փայտերով և ջրհեղեղան հրացաններով զինված զանազանաձև և այլատարազ զինուորներ չարքով կանգնած էին քաղաքապետի դրանը, որոնք եկել էին, որպէս պահապաններ։ Եւ մինչև այժ էլ ամեն երեկոյ մի քանի ժամ այդ խայտաբղէտները ժողովվում են և անձրևի տակ կանգնելուց յետոյ, ցրվում են. իսկ մօլլաները ժողովներ են կազմում և կուրծքերին չարունակ խփելով՝ երգում են և աղօթում։ Այս դեռ բոլորը չէ. անցեալ օրը Թէհրանից հեռագրի մօտ էին կանչել Շարիաթ-Մադարին, որի վրա այս անգամ ևս բարդվում է յանցանքի ծանրութիւնը և ինչ որ խօսակցութիւն է լինում։ Բայց այդ մեզ անյայտ մնաց. միայն, ինչպէս լսում ենք, հրաժարված է պատժի ենթարկված հոգևորականին, որը բոլոր խռովութիւնների սկզբնապատճառն է համարվում, և նրա եղբօրը, պիտի չուտով ուղարկեն Թէհրան։ Շարիաթ-Մադարը իրան անմեղ է համարում այս գործի մէջ և չէ ուզում խառնվել։

Նամակս փակելիս լուր ստացայ, որ Թէհրանից ստացված է հեռագիր, որ նահանգապետը պաշտօնանկ է եղած. Թէհրանից ուղարկված է քննիչ, որը պիտի մնայ որպէս ժամանակաւոր նահանգապետ, մինչև նոր նահանգապետ նշանակվելը։ Մօլլաները հեռագրել են Շահի կնոջը, որի որդուն է յատկացրած Գիլան նահանգը, այն որդուն, որը այժմ Եւրոպա է գտնվում։ Ասում են, որպէս թէ Շահի այդ կինը չուտով Մէչէդ ուխտ է գնալու։ Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կրետէի ազգային ժողովը, որ գումարվեց Կանէյում, ընտրեց Սֆակիանիկիսին նախագահ 103 ձայնով ընդդէմ 85-ի։ Ազատամիտ կուսակցութեան պարագլուխը՝ Միխալիդակիս, որ նոյնպէս քուէարկվեց, ստացաւ միայն 65 ձայն։ Կրետական սահմանադրութեան ծրագիրն արդէն մշակվել է. Փիօրգի արքայորդու ռոճիկը սահմանվել է 200,000 ֆրանկ տարեկան. կրետական մինիստրները պէտք է կոչվեն «կրետական պետական խորհրդականներ». նրանց թիւը լինելու է 5, մէկը պէտք է մահմետական լինի։ Մայրագրի կօմիսարը իրաւունք պէտք է ունենայ նշանակել, արձակել նրանց և դատի ենթարկել, եթէ որ և է զեղծում գործեն։ Բոլոր պաշտօնեաները պէտք է իմանան յունական լեզուն, բայց առաջին ութ տարին մուսուլման պաշտօնեաների համար բացառութիւն է կազմվելու։

—Հռոմի «Tribuna» լրագրին հեռագրում են Լօնդօնից, որ անգլիական կառավարութիւնը իբր թէ հաղորդել է Ռուսաստանին, որ Անգլիան չի մտնելու զինաթափութեան կօնֆերէնցիային, եթէ Իտալիան չի ուղարկի իր ներկայացուցչին։ Ինչպէս յայտնի է, Իտալիան հրաժարվում է ներկայացուցիչ ուղարկելուց, եթէ Վատիկանն ևս ներկայացուցիչ կունենայ։

—Անգլիական ազատամիտ մամուլը մեծ զայրոյթ է արտայայտում Սուդանի ընդհանուր նահանգապետ լօրդ Կիչիների դէմ այն պատճառով, որ նա հրամայել է հանել գերեզմանից Մահդիի դիակը և գցել Նեղոս գետը։ Այդ առիթով «Daily News» ասում է, որ այդ բարբարոս և վայրենի միջոցը նուաստացնում է Անգլիան իր սեպհական և ամբողջ աշխարհի աչքում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՑ ԴՐԹԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

19 փետրվարի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրամաններ. Թիֆլիսի նահանգապետ Բիլով, իր խնդիրքի համաձայն, արձակվում է պաշտօնից։ Կովկասեան քաղաքացիական վարչութեան բժշկական ժասի կառավարիչ Գլավացկի արձակվում է պաշտօնից, հիւանդութեան պատճառով, իր խնդիրքի համաձայն։

ՄԱԴՐԻԴ։ Գեներալ Տօրալ այսօր կը կալանաւորվի՝ Սանտ-Եագօն թշնամիներին յանձնելու պատճառով։

ՊԱՐԻԶ։ Պիկարի գործը։ Պաշտպանողական ճառից յետոյ, նիստը վաղվան օրվայ յետաձգվեց։ Մանօ վաղը կարտասանէ իր ճառը։

ՊԱՐԻԶ։ Նախագահ Լուբէ ընակութիւն հաստատեց Սլիսեան պալատում։

ՄԱԴՐԻԴ։ Գեներալ Տօրալ, որը թշնամիներին յանձնեց Սանտ-Եագօ, զինուորական բանտն է նստեցրած։

Թագուհի-խնամակալուհին խորհրդակցեց դուքս Տէտուանեանի և Րօքէդօի հետ։ Վերջինը այն կարծիքը յայտնեց՝ թէ հարկաւոր է արձակել պատգամաւորների և սենատի ժողովները։ Պահպանողականները խորհուրդ են տալիս չը դիմել այդ միջոցին։

Բիլբաօ։ 1500 լեռնաբանուորներ գործադուլ արին և անկարգութիւններ սկսեցին անել։ Աւերմունք քարեր էր արձակում պօլիցիայի վրա։

ՀՌՕՄ։ Բիլբաօն պապի առողջական դրութեան մասին. օրը հանդիստ անցաւ. օպէրացիա կատարված տեղի վրա ցաւ չէ զգացվում. պապը հաճութեամբ կերակուր ընդունեց. մարսողութիւնը լաւ է. ջերմութիւնը—37,7 է, չնչառութիւնը—22, զարկերակը—78։

ՊԱՐԻԶ։ Բուրբոնեան պալատի նախասենեակներում չատ են խօսում զանազան լիգաների դէմ կառավարութեան ձեռք առած միջոցների մասին։ Հաւատացնում են, որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի փակել այն բոլոր լիգաները, որոնք գոյութիւն ունեն միմիայն կառավարութեան հանգերոզութեան չնորհիւ։ Ռոլհեան Դէրուլէդի դէմ սկսված գործը արդարադատութեան ուշադրութիւնը հրաւիրեց հայրենասէրների լիգայի ապօրէն գոյութեան վրա, այդ պատճառով կառավարութիւնը վճռեց դատարանական կարգով ճանաչել և զանազան ուրիշ լիգաների ապօրինի գոյութիւնը և պահանջել նրանց փակման որոշումը։

Պիկարի գործը։ Ատալէն իր զեկուցման վերջաբանութեան մէջ այն կարծիքն է յայտնում, որ Պիկարի գործը ոչ թէ զինուորական իրաւասութեան է ենթակայ, այլ մեղադրական ատեանի, որն ապա կը յանձնէ այդ գործը երդուեալների դատարանին։ Փաստաբանը պաշտպանում է Պիկարի խնդիրքը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 19-ին Թագաւոր Կայսրը այցելեց Կօստանտինօվսկօէ արտիլէրիական դպրոցը։

Փետրվարի 19-ին, գիւղացիների ճորտութիւնից ազատվելու օրը, Խակիեվսկի տաճարում հոգեհանդստեան պաշարագ ժամուցվեց Կայսր Ալէքսանդր II-ի համար։

Փետրվարի 19-ին, Թիւրքաց լուծից Բօլգարիայի ազատութեան օրը, բօլգարական ուսանող երիտասարդութեան նախաձեռնութեամբ, Կազանեան տաճարում հոգեհանգիստ կատարվեց Ալէքսանդր II և Ալէքսանդր III Կայսրների և Բօլգարիայի ազատութեան համար պատերազմի դաշտում բոլոր զոհ գնացածների համար։ Մաղթանք կատարվեց նոյնպէս Թագաւոր Կայսր Նիկօլայ II-ի արևշատութեան համար։

ԲԱԹՈՒՄ։ Ջնաբուքից յետոյ թանձր ձիւն եկաւ, որից յետոյ սկսվեց անձրև։ Շրջակայ լեռները ձիւնով են ծածկված։ Մովի վրա փոթորիկ կար։ Բաթումը եօթն օր է, որ մայրաքաղաքի պօստ չէ ստանում, թէպէտ այդ պօստը կարելի էր նաւօթօսկով ուղարկել, որը Բաթումի հետ չոգենաւային հաղորդակցութիւն ունի չաբաթը 4 անգամ։

ԱՍԽԱԲԱԹ։ Փետրվարի 17-ի գիշերը քաղաքում սկսվեց մի սարսափելի ուրագան։ Շատ տներից պոկվեցին երկաթէ կտուրները։

ՊԱՐԻԶ։ Պիկարի գործը։ Նիստը առանց դէպքերի սկսվեց։ Հասարակութիւնը քիչ է։ Մանօ բացատրում է, թէ ինչու գործը ուշացաւ. նա չատ ընդարձակ է և երկար ուսումնասիրութիւն է պահանջում։ Մանօ երկար բացատրում է գործի իրաւաբանական կողմը։ Նա այն եզրակացութեան է գալիս, որ քրէական ատեանը պարտաւոր է Պիկարի գործը ուղարկել մեղադրող ատեանը, որովհետև Լէքլուայի մեղսակցու-

թեան պատճառով, գործը պէտք է քաղաքացիական դատարանների քննութեան ենթարկվի:

ՀՌՕՄ: Բիւլբուլէն: Պապը պառկած է անդամալոյծ, թժիշկների խորհրդի համաձայն: Բոլոր օրգանները կանոնաւոր են գործում. առողջական ընդհանուր դրութիւնը լաւ է:

20 փետրվարի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագաւոր Կայսրը հրաժարեց գեներալ-ադիւտանտ Վանովսկուն մանրակրկիտ քննութիւն կատարել այն անկարգութիւնների պատճառների և հանգամանքների մասին, որոնք սկսվեցին Պետերբուրգի հաւալսարանում և տարածվեցին մի քանի ուրիշ դպրոցներում էլ: Մի և նոյն ժամանակ Նորին Մեծութիւնը բարեհաճեց յանձնարարել, որ վերոյիշեալ դպրոցներում սովորական կարգը վերականգնելու համար պարտաւոր են միջոցներ ձեռք առնել այդ դպրոցների գլխաւորները:

ՄԱԴՐԻԴ: Թագուհի-խնամակալուհին առաջարկեց Սահաստային վերակազմել մինիստրութիւնը, առանց արձակելու կօրտէսները: Սա դաստա մերժեց, յայտնելով, թէ ինքն այդ բանը անհնարին է համարում: Խնամակալուհին յետաձգեց ճգնաժամի լուծումը, որովհետև ցանկանում է դեռ նախապէս խորհրդակցել պատգամաւորների ժողովի և սենատի նախագահների հետ:

ՊԱՐԻԶ: Սենատը ձեռնարկեց նախագահի ընտրութեանը: Ֆալիէր ստացաւ 96 ձայն, Կոնստան—84, Ֆրան-Շօվօ—50, Պէյտրալ—25: Լինելու է կրկնաքուէարկութիւն: Սկսվեց երկրորդ քուէարկութիւն: Ֆալլիէր ընտրված է նախագահ 151 ձայնով: Կոնստան ստացաւ 85 ձայն:

Պիկարի դործը: 4½ ժամ տևող խորհրդակցութիւնից յետոյ, քրէական ատեանը վճիռ կայացրեց, որով Պիկար և Լեբրուա ենթարկվում են ժեղադրական ատեանի դատին կեղծումից, կեղծումից օգտվելու և էստերհազիի ու Դրեյֆուսի գործին վերաբերեալ գաղտնի փաստաթղթերը հաղորդելու համար: Որովհետև պօստային աղանիներով և Բուլօի գործին վերաբերեալ գաղտնի դօկումենտները կապ չունեն նախընթացների հետ, այդ պատճառով նրանց քննութիւնը պատկանում է վճռարարական դատարանին:

ՀՌՕՄ: Բիւլբուլէն: Պապը օրը չատ լաւ անցկացրեց. չէր գանգատվում ցաւի վրա:

ՄԱԴՐԻԴ: Սիլվելա յանձն առաւ մինիստրութիւն կազմել: Վաղը, երևի, կառաջարկվի հետեալ ցուցակը. նախագահ—Սիլվելա, արտաքին գործերի մինիստր—Պիդալ, զինուորական—Պօլավէխա, ներքին գործերի—Պաստօ, ֆինանսների—Վիլավերդէ, արդարադատութեան—Պիւրան, ծովային—ծովապետ Լազագա, և հասարակական աշխատանքների—Կարդենաս, Դրանք բոլորն էլ պահպանողականներ են: Ազգային ժողովները կարձակվեն: Կարծում են, որ ընտրութիւնները տեղի կունենան ապրիլի վերջը, իսկ ազգային ժողովները կը գումարվեն մայիսին: Լօնդոնի և Պարիզի դեսպանները, զանազան պրէֆեկտներ, ոստաս-սեկրետարներ և քաժանմունքների գլխաւորներ հրաժարական տուեցին:

ՀՌՕՄ: «Սահֆանիի գործակալութիւնը» յայտնում է, որ կատարելապէս սուտ է այն տեղեկութիւնը, որ Հռոմում դտնվող կարդինալները խորհրդակցութիւններ են կազմում կօնկլավի հնարաւորութեան վերաբերմամբ: Պապի առողջական դրութիւնը չարունակում է գոհացուցիչ լինել: Երէկ, երբ պապը կամենում էր վերկենալ առանց օտարի օգնութեան, վէրքը նորից բացվեց:

ՊԱՐԻԶ, Պարիզի և Լօնդոնի կաբինէտները մի համաձայնութիւն կայացրին, որով Ֆրանսիային թոյլ է տրվում պահել Մասկատում քաղաքական պահեստ Անգլիայի հետ միատեսակ պայմաններով:

ՀՌՕՄ: Բիւլբուլէն: Պապը գիշերը հանդիստ անցկացրեց և այսօր լաւ է զգում իրան: Նա անկողնից վերկացաւ մի քանի ժամով:

ՄԱԴՐԻԴ: Նոր մինիստրութիւնը կազմակերպված է: Սենատի նախագահ նշանակվում է Մարտինէց-Կամպօս, պատգամաւորների ժողովի նախագահ՝ Պիդալ:

21 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ի նկատի ունենալով «Вѣстникъ Европы» ամսագրի վնասակար ուղղութիւնը, որ յաճախ արտայայտվում է այն յօդուածներում, որոնք վերաբերում են կառավարչական ձեռնարկութիւններին Ֆինլանդիայում, ժանուանդ Նարկութիւններին Ֆինլանդիայում, ժանուանդ Մեխելինի յօդուածում, որ տպված է 1898 թվի № 12-ում և ներկայ տարվայ «Հասարակական խրօնիկայից» վերնադրով յօդուածում, ներքին գործերի մինիստրը որոշեց. յայտնել «Вѣстникъ Европы» ամսագրին երկրորդ նախազգուշութիւն:

ՎԱՇԻՆԳՏՕՆ: Կօնգրէսը ժամանակաւորապէս փակվեց:

22 փետրվարի

ՄՕՍԿՎԱ: Րիգո-Օրլօվեան երկաթուղու կայարաններից մէկում, 3 կլօսի վագօնում տեղաքեց քէնզինով մի չինչ, որ դրված էր վառարանի մօտ, և հրդեհ սկսվեց: Այրվեցին 5 ճանապարհորդներ, 11 հոգի վիրաւորվեցին:

ՕԴԷՍԱ: Դէրիբասովսկի և Կրասնի փողոցների անկիւնում մեծ հրդեհ սկսվեց: Հրդեհը հանդցնելու ժամանակ մի քանի հրդեհաշէջներ վնասվեցին, իսկ մի բանուր սպանվեց:

ՏՈՒԼՕՆ: Առաւօտեան 2½ ժամին, անյայտ պատճառով, պայթեց վառօդի պահեստը Լագերբռնում, Լա-Սէյնի և Տուլօնի մէջ: Այդ պահեստում ծառայող բոլոր վնասները սպանվեցին: Շատ գոհեր կան Թաղի բնակիչների մէջ, որոնց տները մօխիր են դարձել:

ՏՈՒԼՕՆ: Հաւատացնում են, որ վառօդի պահեստի մէջ 50,000 կիլօգրամ վառօդ կար: Սպանված են 60, վիրաւորված են 110 մարդիկ: Ամբողջ Թաղը աւերված է:

ՀՌՕՄ: Պապի առողջական դրութեան մասին հաղորդում են, որ գիշերը հանգիստ անցաւ: Don Chrisciotte ասում է, թէ գիշերը լուրեր տարածվեցին պապի դրութեան վատանալու և մինչև անգամ նրա մահվան մասին, բայց այդ լուրերը անհիմն են:

ՊԷԿԻՆ: Յզուն-լի-եամէն մերժեց իտալական դեսպանի պահանջը՝ Սանժուանեան ծովածոցում ծովային կայարան տալ Իտալիային: Այդ քայլին առանձին նշանակութիւն չեն տալիս, որովհետև յայտնի է, որ իտալական կառավարութիւնը չի հրաժարվի իր պահանջից, և կասկած չը կայ, որ բանակցութիւնները բնական ընթացք կը ստանան:

ՀՌՕՄ: Լուր է պտտում, որ փոխ-ծովապետ Գրենէ Նէապոլից Զիմասան է ուղարկվում՝ չինական ջրերում կենտրօնացած նաւերի հրամանատարութիւնը յանձն առնելու համար:

ՀՌՕՄ: Վերջին տեղեկութիւնների համեմատ, պապն այնքան լաւ է զգում իրան, որ օրվայ ընթացքում և երեկոյեան Լապօնի վատիկանից դուրս եկաւ և վերադարձաւ այնտեղ միայն երեկոյեան 11 ժամին, որպէս զի զգուշութեան համար, հսկէ հիւանդի վրա գիշերը:

ԲՐԻՒՍԷԼ: Թագուհու առողջական դրութիւնը վատացաւ: Քիչ յոյս է մնում փրկելու օգուտափառ հիւանդին: Թագուհին հաղորդվեց:

ԲԵՐԼԻՆ: Մանիլլայից հեռագրում են, որ «Kaiserin Augusta» կրեյսէրի հեռանալուց յետոյ, գերմանական հպատակների պաշտպանութիւնը յանձն առաւ Ամէրիկան:

ՏՈՒԼՕՆ: Կատարված քննութիւնը ոչինչ էական հետևանքների չը բերեց: Ներկայումս 70 սպանվածներ տարվեցին հիւանդանոցները կամ իրանց բնակութեան տեղերը: Պահեստի չուրջը, երկու կիլօմէտր տարածութեամբ, ամեն բան քանդված է: Տները ոչնչացրված են, դաշտերը աւերված: Պայթիւնը վնաս է հասցրել մինչև անգամ Տուլօնին. պայթիւնից 4 կիլօմետր հեռաւորութեան վրա, Սէյն-Ժան արուարձանում կատրվեցին դռները և պատուհանները:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Փետրվարի 19-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ սրժ.		93	ը. 90 կ.
Բերլինի վրա 100 մարկ	„ „	45	„ 77½„
Պարիզի վրա 100 ֆրանկ	„ „	37	„ 22⅝„
Հօբսային դիսկօնտ		6	—7½ %
4% պետական բնչնա		101	„ — „
4½% նեբքին փոխառութեան		101⅜	„ — „
4% գբաւ. թղթ. ագն. կալ. բանկի		99⅝	„ — „
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի		99⅝	„ — „
Սերբին 5% առաջին փոխառութ.		287½	„ — „
Նոյնը երկրորդ —		273⅜	„ — „
Նոյնը երկրորդ —		222½	„ — „
5% գբաւ. թղթ. ագն. կալ. բանկի		—	„ — „
5% պետական երկաթուղ. բնչնա		—	„ — „
Պետերբ. քաղ. կբ. ընկ. օբլ. 4½%		100½	„ — „
Մօսկվայի քաղաք. կբ. օբլ. 5%		101	„ — „
Օդեսայի — — 5½		100½	„ — „
Թիֆլիսի — — 5%		99⅜	„ — „
Թիֆլիսի կալ. բանկի — —		—	„ — „
Նոյնը — — 5% —		100	„ — „
Ռոստովի կալ. բանկի. 6%		101	„ — „
Նոյնը — — 5%		100	„ — „

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ. ՄԱԼՈՒԽՄԵԱՆ

„ՄՇԱԿԸ“

(Մնում են փոքրաթիւ օրինակները)

ԳԻՆԸ 50 ԿՕՊԷԿ

Դիմել «Մշակի» Խմբագրատուն: 7—8

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդները ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՕՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխաների հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1½—2½ ժ. ներքին և միաւեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաթերաժուիշն), վեներական և մոլորի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ԼՈՒԿԵՆԿՕ հիւանդասպասողը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում ամէն մէկի, խոխ, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
96—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, երեքշաբթի, լինելու է

Ընտանեկան երեկոյթ

Վաճառատուն սերմերի

— ԼԱՐՇԷ —

հիմնված 1872 թուին

Միքայէլեան կամուրջի վրա, № 47.

Ստացված են զանազան տեսակ սերմեր: Գները նշանակված են պրէյս-կուրանտի մէջ, որ ուղարկվում է ձրի ամեն մի պահանջողին:

1—5

Վաճառվում է

ՆՕՐԵԿ

վէպ ԲԱԲԿԵՆՑԻ

Գինը 70 կօպէկ:

Հարցնել կենտրօնական և Կովկասեան վաճառանոցներում: (Ե. ո.) 1—10

ԿԱՖԷ ՉԻԼԼԷՐ

(Café Siller)

Վիէննա, I. Laurenzerberg. Մեծ և էլեկանտ կաֆէ, բազմաթիւ հայ և ռուս լրագիրներով. գալիս են բոլոր հայ և շատ օտարականներ: Ընտիր սուրճ և լաւ ծառայութիւն: 14—25

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ կար ու ձեվ դպրոցում ԼՈՒԱՑԱՆՈՑԻ դասընթացը արդէն սկսված է: Ընդունելութիւնները շարունակվում են: Գանձակայա, № 25: 10—10

Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
գրադարան-ընթերցարան

(Մէջլիս փողոց, տ. Տէր-Աատուրովի, Ադելխանեանի մագազինի գլխին), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9: Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը: Մուտքը 2 կօպ., ամսով 40 կ. աշակերտներից կէս վճար: 8—50

ՇՈՒԼԱՎԷՐԻ հասարակութեան հարկաւոր է ոչ պակաս հինգ տարվայ փորձառութիւն ունեցող ու հայերէն իմացող ԲֆիշԿ: Ցանկացողները կարող են իրանց պայմանները գրել Շուլավէրը, տատնուտէր Վախտանգ Մեհրաբեանին: 8—8

ԲՖԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼՕՎ

Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝

Առաւօտեան 9—12 ժամը

Երեկոյեան 5—7 ժամը:

Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31:
(Ե. Տ. Չ.) 3—100

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Մէքայէլեան փողոց, տ. № 93. տէլէֆօն № 506: (Տ.) 10—45

ԼՕԾՍ ՏԵՍԱԻ

ԼԻՕ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

(Պատմական վէպ, 755 երես)

Գինը 1 ՐՈՒԲ. 30 ԿՕՊԷԿ (սակեակած 2 րուբլի)

Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ—տեղնակի մօտ («Մշակի» խմբագրատանը) և կենտրօնական գրավաճառանոցում: ՇՈՒՇՈՒՄ—Բագրատ Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում:

Հեղինակի հասցէն՝ ТИФЛИСЪ, редакція „Мшакъ“. 4—10



Գիւղատնտեսական գործիքներ
եւ մեքենաներ
Լ. ԽԱՆ-ԱՂԵՄԱՆԻ
250 նկարով: Գինն է 50 կօպ.
Դիմել՝ Тифлисъ, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (Ե. ո.) 20—50

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, ժանեվով Տրապիզոն, Սամսոն և Գօյիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 3/15 մարտի, ՍԻՐԿԱՍՍԻ չոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար դիմել բարեհաճեն դիմել ընկերութեան գրծակատարներին՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդան:

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վ. Լիկօտր դ'Արնօվին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Ս. Դիլղարեանցին, Նեանովն, Սիմոնի փող. Խօջափարուխովի և Մայսուրաձէ քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլղարեանցին, Կօլուբակինսկայա տրապարակ: ՆՕՎՕՐՕՍՍԻՑՔ—պ. Մելխիօր Հերչենօզերին: 20—2
(Ե. Տ. Չ.)

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Меликовъ ул № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Февраля 1899 г.